ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերի 5-ից 8-ը
Ավստրիայի Հանրապետություն, քաղաք Վիեննա գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Մայրանուշ Մանվելյան՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (Այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության հետազոտությունների և զարգացման բաժնի պետ:

Տաթևիկ Դանիելյան՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության հետազոտությունների և զարգացման բաժնի գլխավոր հարկային տեսուչ (ժ.թ.):

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ավստրիայի Հանրապետություն, քաղաք Վիեննա, ս.թ. սեպտեմբերի 5-ից 8-ը:

3. Հրավիրող կողմը

Հարկային մարմինների միջազգային հարցմանը (ISORA) նվիրված աշխատաժողովը կազմակերպվել էր Ավստրիայի Դաշնային Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից և անց էր կացվում Հարկային մարմինների ներ-եվրոպական կազմակերպության (IOTA) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) փորձագետների կողմից: Աշխատաժողովին մասնակցում էին հարկային մարմիններում աշխատող և ISORA հարթակի կոնտակտային անձ, համակարգող կամ տվյալները լրացնող հանդիսացող ավելի քան

50 մասնակից՝ 38 երկրներից: Մասնակից երկրներն էին՝ Հայաստանը, Գերմանիան, Ավստրիան, Լիտվան, Լատվիան, Իտալիան, Իսպանիան, Դանիան, Ուկրաինան, Ֆրանսիան, Պորտուգալիան, Հունաստանը, Նիդերլանդները, Ուկրաինան, Սաուդյան Արաբիան և այլն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

2023 թվականին իրականացվող ISORA հարցումն անց է կացվում ավելի համապարփակ հարցաշարով, քան անցած չորս տարիների ընթացքում անցկացված հարցումները: Աշխատաժողովի ընթացքում քննարկվել է նոր տվյալների կիրառման ուղիները և դրանց օգտագործումը հարկային մարմինների գործունեության արդյունավետության գնահատման մեջ: Հայաստանի ներկայացուցիչների նոր հարցերի վերաբերյալ քննարկումներին մասնակցելը կնպաստի հարկային մարմինների գործունեության արդյունավետությունը գնահատելու նպատակով վերլուծությունների, վարկանիշային աղյուսակների կազմման և զեկույցների հրապարակման համար միջազգային տեղեկատվական հարթակներում ՀՀ ՊԵԿ գործունեության վերաբերյալ տվյալների ճշգրիտ ներկայացմանը և վարկանիշային աղյուսակներում ՀՀ ՊԵԿ բարձր դիրքերի ապահովմանը:

5. Քննարկված թեմաները

Աշխատաժողովի ընթացքում փորձագետների կողմից ներկայացվել է ISORA հարթակի կառուցվածքը և ֆունկցիոնալ նոր հնարավորությունները, հարթակից օգտվողների դերերը և նրանց գործառույթները, տվյալների օգտագործման գործիքակազմը, տեղեկատվության լրացման աշխատանքների համակարգման մասին լավագույն փորձը: Քննարկումների արդյունքում մշակվել են նաև

առաջարկություններ տվյալների շտեմարանի արդյունավետ օգտագործման ուղիների վերաբերյալ, մասնավորապես՝ տվյալների օգտագործումը հարկային մարմնի երկարամյա ռազմավարության մշակման, գործունեության արդյունավետության գնահատման և այլ ասպեկտներում օգտագործման վերաբերյալ:

Քննարկումները վերաբերում էին հարկային վարչարարությանն առնչվող մի շարք հարցերին, մասնավորապես՝ հարկային մարմնի կողմից հավաքագրված եկամուտներին, իրականացվող ծախսերին, մարդկային ռեսուրսների կառավարմանը, հարկ վճարողների սեգմենտին, գործառնական ցուցիչներին, հարկային մարմնի և այլ շահագրգիռ կողմերի հետ հարաբերությունների կառավարմանը: Հարցաշարում ներառված յուրաքանչյուր թեմայի շուրջ եղել են նաև առանձին խմբային քննարկումներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Քննարկվել են մի շարք թեմաներ, մասնավորապես.

- նախորդ տարիների փորձը և այս տարվա աշխատանքների իրականացման պլանավորումը,
- ինչպես կարող են ISORA համակարգողները խթանել հարթակում առկա տվյալների օգտագործումը ներքին աշխատանքային միջավայրում և բարձրագույն ղեկավարությանը ներկայացնել հարթակում առկա տվյալների հիման վրա իրականացված վերլուծություն:

Ինչպես նաև եղել են խմբային քննարկումներ և փորձի փոխանակում մասնակից երկրների միջև, մասնավորապես՝

- ներկայացվեց Հունաստանի, Նիդերլանդների, Ուկրաինայի և Սաուդյան Արաբիայի լավագույն փորձն ISORA հարթակում տվյալների հավաքագրման և լրացման աշխատանքների վերաբերյալ,

- տվյալների հավաքագրման ընթացքում ի հայտ եկած դժվարությունները և դրանք հաղթահարելու ուղիների վերաբերյալ գաղափարներ:

7. Ստորագրությունը, ամսաթիվը

Մայրանուշ Մանվելյան

Տաթևիկ Դանիելյան

13.09.2023